

ԵՐԱԺՇՏԱԴԷՏ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆ

(Կենսագրական ակնարկ նրա XXV-ամեայ երաժշտական
գործունեութեան առթիւ.)

Անցեալ 1911 թւականին լրացաւ քսան և հինգ տարին
այն օրեց, երբ Մոսկւայում հանգուցեալ պրոֆեսոր Գրիգոր
Խալաթեանի ջերմ աջակցութեամբ առաջին անգամ տալ-
գրեց եւրոպական նոտաներով հայ երաժշտագէտ Ն. Տիգ-
րանեանի անդրանիկ աշխատութիւնը Օր. I, որը կրում է
«Անդրկովկասեան երգեր ու պարեր» վերնագիրը:

Նիկողայոս Տիգրանեանը ծնւել է Աղէքսանդրապոլ քա-
ղաքում 1856 թ. օգոստոսի 19-ին մի արքիտոնիքատ ընտանի-
քում: Տիգրանեան տոհմը դեռ 19-րդ դարի սկզբից գնահա-
տելի ընդունակութիւններով օժտւած և աչքի ընկնող մի ըն-
տանիք է եղել, որի մասին այնքան յարգանքով է խօսում մեծ
հայրենասէր Խաչատուր Աբովեանը իր «Վէրք Հայաստանի»
աշխատութեան մէջ, անւանելով այդ տոհմը «աշխարհոչակ
տունն Տիգրանեան», (Վէրք Հայաստանի, ԴԼ. II, երես 188
հրատ. Իս. Ժամհարեանցի, Մոսկւա 1897 թ.):

Նիկողայոս Տիգրանեանի հայրը՝ Թադէոս աղա Տիգրան-
եանը մի շատ աչքի ընկնող, լուսամիտ ու համակրելի
անձնաւորութիւն էր. նրա ժամանակիցները խիստ սիրելի ու
բարի յիշողութիւններ են պահում նրա մասին: Այդ շնորհալի
անձնաւորութիւնը աղէքսանդրապոլեցիներէից առաջինն էր, որ
40-ական թւականներին աւարտեց Թեֆլիսի առաջին կլասի-
քական գիմնազիան: Շնորհիւ այն հանգամանքի, որ նա ստա-
ցաւ հիմնաւոր և օրինակելի կրթութիւն, տալադապոլում նա
ինքն էլ երբ հայր դարձաւ, ամեն կերպ աշխատեց, նիւթական
անսահման զոհողութիւններ կրեց, որ իր բոլոր որդիքն էլ բարձր
ուսում ու կրթութիւն ստանան:

Դեռ երեխայ ժամանակւանից նկատելի էր փոքրիկ Նիկո-
ղայոսի արտասովոր ընդունակութիւնները, որոնք հիացմունք
էին պատճառում նրա ծերունի պապերին և որդեսէր հօրը:

Երբ լրանում է երեխայի 6 տարին, նրան տալիս են Աղէք-
սանդրապոլի կայ-կաթոլիկների դպրոցը, ուր փոքրիկ Նիկո-
ղայոսը սովորում է գրել-կարդալ և զարմացնում է ամենքին
իր արտակարգ ընդունակութիւններով: Մահայն մի այլ դժբախտ
ճակատագիր էր լինակւած այդ սրամիտ ու զաւգիւղուն ման-

կանը: Իննը տարեկան հասակում ծաղիկ հիւանդութիւնը զրկեց նրան տեսութիւնից. տեղական բժիշկները բոլոր ջանքերն ապարդիւն անցան և մանուկ նիկողայոսը զրկեց երկու աչքերի լոյսից, խոր սգի մէջ թողնելով թէ իր ծնողներին և թէ ամբողջ շրջապատը:

Սակայն սրամիտ մանկան ծնողները իրանց հեռատես դիտողութեամբ որոնեցին ու գտան մի այլ ասպարէզ, ուր իրանց դժբախտ զաւակը պիտի կարողանար ցոյց տալ իր մէջ թագնւած ընդունակութիւնները, ասացուցանելով մեզ, որ տաղանդն ու բնութիւնից պարզեւած խելքը կարող են զարգանալ և վերին աստիճանի անմիտութար պայմաններում:

Այժմ, ասպագոյ երաժշտագէտի ծնողները չյուսահատուցին իրանց որդուն հասած դժբախտութիւնից: Թադէոս աղա Տիգրանեանը. այդ անգուգական հայրը, իր հանդիսար կորցրած, դիշեր-ցերեկ միջոցներ էր որոնում, թէ ինչպէս անէ, որ իր նիկողայոս որդին էլ զուրկ չմնայ մտաւոր լոյսից: Նստած Կովկասի մի խուլ անկիւնում նա սկսեց տեղեկութիւններ հաւաքել Եւրոպայի մայրաքաղաքներից, այն տեղերում գոյութիւն ունեցող կոյրերի զպրոցների մասին, և Վիէննայի կոյրերի կայսերական ինստիտուտը լաւագոյնը գտնելով, 1873 թւին փոքրիկ նիկողայոսին տարաւ Աւստրիայի մայրաքաղաքը, տեղաւորեցրեց այդ Ինստիտուտում, ուր կոյր մանուկներն ստանում էին օրինակելի և լուրջ կրթութիւն և ծանօթանում էին ժամանակակից բոլոր առարկաների հետ:

Պատանի նիկողայոսը 6 տարի մնաց Վիէննայում և ստացաւ այն բարձր ունիվերսալ ուսումը և առանձնապէս կատարելագործումը երաժշտութեան մէջ, որն ապահայում հիմը ծառայեց նրան դասուելու յայտնի օրիէնտալիստ-կոմպոզիտորների շարքում:

Մեր հայրենիքից երաժշտագէտին մեծ բախտ էր վիճակւած արտասահմանում: Ճակատագրի մի առանձին տնօրէնութեամբ Վիէննայում նա ապրեց մի այնպիսի փառապանծ ընտանիքի մէջ, որն իր անջնջելի կնիքը դրոշմեց նրա ասպագայ ամբողջ կեանքի վրայ: Դա պրոֆեսսոր և Կայսերական Ինստիտուտի դիրեկտոր Պաւլաւէկի ընտանիքն էր, որն իր հարազատ զաւակի պէս ընդունեց ու սիրեց—ինչպէս իրանք էին ասում— «Մեծ Տիգրաններին» ժառանգ ուսանող Տիգրանեանին: Պրոֆէսսոր Պաւլաւէկի ընտանիքը, որը ցոյց տւեց պատանի նիկողայոսին հարազատ ծնողներին յատուկ սէր ու դորով, յայտնի էր բարձր շրջաններին իր օրինակելի համեմատութեամբ: Պրոֆէսսորն ունէր վեց մանկամարդ դուստրներ, որոցն ան-

վերջ կարգում էին երատասարդ Կովկասցու համար գերմանական հին ու նոր հեղինակների երգերից և իրենց նաղելի գրաւչութեամբ երբեմն-երբեմն աղմկում էին դժբաղդ պատանու սիրտը: Մինչև այսօր էլ հայ երաժշտագէտը մեծ յարգանքով ու առանձին ոգևորութեամբ է խօսում իր տաղանդաւոր պրոֆեսսորի և նրա ընտանիքի անդամների մասին, որոնց հետ նա գեռ մինչև օրս էլ պահում է սիրալիր և սրբապաշտ յարաբերութիւն:

Ահա այստեղ, այս ինտելիգէնա շրջանում, նա կոհեց, յղիւնց և իւրացրեց գերմանացուն յատուկ մի քանի գեղեցիկ գծեր, որոնք նրա կեանքի և երաժշտական գործունէութեան մէջ առաջնակարգ տեղ բռնեցին:

1880 թւականին երաժշտագէտ Տիգրանեանը աջող կերպով աւարտեց Վիէննայի Կայսերական Ինստիտուտը և ընգմիշտ վերադարձաւ իր հայրենի քաղաքը-Աղէքսանդրապոլ:

Եւ ահա այդ ժամանակահատից սկսած հայ երաժշտագէտը նւիրեց իրան ազգային և արեւելեան եղանակները ուսումնասիրութեանը և շնորհիւ իր ոտացած լուրջ կրթութեան ու տաղանդի իր պատեաւոր տեղը բռնեց արեւելեան երաժշտութեան պատմութեան մէջ:

Տիգրանեանի երաժշտական ըզմնաւոր գործունէութեան մասին չենք կամենայ այստեղ երկար կանգ առնել, սակայն անհրաժեշտ ենք համարում այսքանն առել, որ նրա գլխաւոր արժանաւորութիւններից մէկն էլ այն է, որ նա պէգանտիկ ճշտութեամբ ձայնագրելով ազգային և արեւելեան եղանակները, մեծ տաղանդով գտաւ արեւելեան երաժշտութեան համապատասխան և ընորոշ հարմոնիզացիա եւրոպական մուզիկայի տէօրիայով և հարմոնիայով:

1894 թւին Ն. Տիտրանեանը գնաց Պետերբուրգ և մի տարի պարապեց յայտնի պրոֆեսսոր Ն. Սուլովիւի մօտ, բացառապէս կօմպօզիցիայով:

Այստեղ նա 1894 թւի ապրիլի 22-ին, Պետրովեան առեւտրական դպրոցի դահլիճում, ռուս գիտակից հասարակութեան առաջ, առաջին անգամ հրապարակ դուրս եկաւ և նւագեց իր արեւելեան եղանակները, որոնց մի շատ աննշան մասն էր նա հրատարակել մինչև այդ ժամանակ: Նրա կոնցերտը նիւթ դարձաւ բազմաթիւ յօգւածների, նւիրած թէ իր աչքի ընկնող երաժշտական պաշարին ու ընդունակութեանը, և թէ արեւելեան եղանակները ոգուն և արժանաւորութեանը: Պէտք է ի նկատի առնենալ, որ Ռուսաստանի մայրաքաղաքը, իր մի դարեան տերապետութիւնից յետոյ, առաջին անգամն էր լսում հայկական, պարսկական, վրաց

և բրդահան երգերը, մեղեդիներն ու պարերը և որի համար ռուս երաժշտական քննադատները նւիրեցին գովասանական յօդւածներ նրանց հեղինակ—կոմպոզիտորին: Յայտնի քննադատ Ն. Սոլովևը այդ կոնցերտի առթիւ «Новости» լրագրի վերոյիշեալ համարի մէջ գրեց հետևեալը. «Տիգրանեանն իր պիէսներն մէջ շատ հարազատ կերպով է բմբռնել արևելեան եղանակների ոգին. եթէ չենք սխալուում, աւելացնում է տաղանդաւոր քննադատը, Կովկասեան եղանակների նմանօրինակ մանրադնին, ուղիղ և գեղարւեստական մշակում մեր երաժշտական աշխարհում կատարւում է առաջին անգամ»: «Виржевыя Вѣдомости» լրագրին իր 1894 թւի № 98-ի մէջ նոյն մարդով և նոյն գովասանքով է խօսում մեր երաժշտագէտի մասին: «Новое Время» լրագրերը ապրիլի 22-ի կոնցերտին նւիրած մի ընդարձակ յօդւածում նախ կանգ է առնում արևելեան եղանակներէի «բմահաճոյրն» մասին. (капризность ритмовъ) և ապա խօսում է Տիգրանեանի մասին, որպէս այս գործի շնորհալի և եռանդուն պիւսներին: «Ինչպէս այս գործի առաջին պիւսներ, Տիգրանեանը ամենից առաջ արժանի է կատարեալ համակրանքի և աջակցութեան, ստանալով երաժշտական լուրջ կրթութիւն, աւելացնում է թերթը, նա կարող է մեծ ծառայութիւններ մատուցանել Կովկասի երաժշտագիտութեանը, որի մասին, մինչ նա, ոչինչ չէ՛ արւած մինչև այժմ Ռուսաստանի այս հարուստ մասում ապրող եւրոպացիների ձեռքով»: «Петербургская газета» օրաթերթը իր 1894 թւի ապրիլի 24-ի № 110-ի մէջ յիշելով Տիգրանեանի այդ կոնցերտի ունեցած ահագին աջողութիւնը, աւելացնում է. — «Նրա եղանակները, որոնք ունին ազգային բնաւորութիւն, շատ հետաքրքիր են ըովսնդակութեան կողմից»: Նոյն ոգով յօդւածներ տպագրեցին «Виржевыя Вѣдомости», «Гражданинъ» և այլ մեծ ու փոքր թերթերը և այգպիսով հայ երաժշտագէտի անունը յայտնի դարձրին քաղաքակիրթ աշխարհին:

Դրանից յետոյ, ծանրաբեռնւած մայրաքաղաքի լրագրների և երաժշտական հռչակ վայելող անձանց նպատաւօր կարծիքներով ու քննադատութիւններով, հայ երաժշտագէտը վերադարձաւ Կովկաս և հետևեալ 1895 թւի մարտի 22-ին և ապրիլի 11-ին կոնցերտներ տւեց նախ Թիֆլիսի արքունական թատրոնում և ապա Բագուի կլուբի դահլիճում: Այս կոնցերտի առթիւ Կովկասի հայ և ռուս մամուլը նւիրեց մի շարք համակրական յօդւածներ և այգպիսով նրա անունը յայտնի դարձրեց և իր ծննդավայրում:

Պետրոս Մոնոպեանց.